տներ շինեցին. ասանկով Լաբրետոնը գեղ մը ձեւացաւ, ու եռքը քաղաք դարձաւ։ Մեքանաթացիք փառաւոր տաճար մը շինեցին՝ սուրբ տունը մէջը առնելու համար. Յուլիոս Բ պապը նոր տաճար մըն ալ շինեց առջինէն աւելի փառաւոր, քովն ալ քահանայից բնակելու տեղ. ուրիշ հայրապետներն ալ չորս կողմը պարիսպ քաշեցին, ու քաղաքին պատիւը աւելի մեծցուցին՝ եպիսկոպոսական աթոռ ընելով. աս պատճառաւ աւելի շատցան ուխտի գնացողները. կ'ըսեն թէ ամէն տարի ինչուան 200,000ին աւելի ուխտաւոր կ'երթայ հոն։ Իսկ թագաւորներուն իշխաններուն տրուած փառաւոր ընծաները խիստ շատ ու հարուստ բաներ էին. և թէպէտ Մաղղիացիք ան գանձերուն մեծ մասը յափշտակեցին ատենով, բայց ետքը նորէն հարբստցաւ։

Աս տունը 31 ոտք երկայնութիւն ունի, 13 ոտք լայնութիւն, 18 բարձրութիւն. ներսը մէկ թզաչափ բարձրութեամբ արձան մը կայ Աստուածածնայ՝ մայր փայտէ շինած. աս արձանը Մաղղիացւոց խռովութեան ատենը Փարիզ տարուեցաւ, բայց ետքը 1801ին Պիոս Է հայրապետին աղաչանքովը նորէն դարձուցին. անոր տակը սեղան մը կայ ակատ՝ յասպիս ու գոճազմ քարերէ շինած. աս սեղանիս ընծան Կոզմաս Բ, Թոսքանայի դուքսը նուիրեց. աս սեղանին մէջ ագուցած է նաև սուրբ տանը հետ եկած առջի սեղանը։ Սեղանին ձախ կողմը պատին վրայ թնդանօթի ռումբ մը կախուած է, որ Իրանտոլայի պաշարման ատենէն մնացած է. իսկ աջ կողմը դարան մը կայ, մէջը խոհակերոցի կարասիք և ուրիշ անօթներ. պատուհանին տակը խաչելութեան պատկեր մը կայ, երկու կողմն ալ սուրբ կուսին և Յովհաննէս աւետարանչին պատկերքը։ Շատ փառաւոր զարդերով շինուած է դրսի կողմը, որուն երկայնութիւնը է 60 թիզ, լայնութիւնը 40 ու բարձրութիւնը 50ին աւելի. տանը չորս կողմը 16 սիւն կայ՝ վարպետ բանուածքներով զարդարած. բոլոր ծախքը 250 հազար ֆրանքէն աւելի եղաւ։ Տունը խաչաձև է. մէջը տասուերկու մեծ սիւներու վրայ կեցած գմբէթ մը կայ. չորս կողմը եօթը մատուռ ունի. հեռուն ուրիշ մատուռներ ալ կան՝ երևելի նկարիչներու պատկերներով զարդարած, ճակատն ալ մարմարիոնէ գեղեցիկ արձաններով։ Հրապարակին մէջ մէկ յորդ աղբիւր մը կայ շատ մեծագործ. երևելի է նաև աւանդատունը ու մեծ սրահը, ուր որ կը պահուին գանձերն ու ընծաները։

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ-ԾԷՆ ԱԼ- Գաղղիացւոյն Թագաւորական Հրեայ անունով Գիրքը։

ԳԱՂՂԻԱԿԱՆ մատենագրութիւնը ուրիշ ամէն ծաղկեալ ազգաց մատենագրութեանը համեմատելով՝ գրեթէ միշտ ամէն ազգաց մէջ դիւրաւ ընդունելի եղած է։ Այց, թէ որ քանի մը շատ երևելի մատենագիրներ դուրս հանենք, շատ անգամ աս ազգին մատենագրաց մեծ մասին մէջ կը պակսի խորին փիլիսոփայական մըտածութիւն, ու բացատրութեան ոյժ։ Այս սակայն որովհետև բնական շնորհք մը, համոզողական վայելչութիւն մը ու լեզուի անուշութիւն մը ունին, անոր համար ամէն տեսակ ընթերցողաց սիրելի կ'ըլլան։ Մանաւանդ աւելի ընդունելի կ'ըլլան չափաւոր գիտնականաց, որ ամէն ազգի մէջ՝ խորունկ մտածողներու հետ բաղդատելով՝ շատ աւելի են։ Յաւալին աս է՝ որ ամէն գրուածք, ինչպէս ամէն ազգի մէջ՝ այսպէս Մաղղիացւոց մէջ ալ, միշտ օգտակար չեն. երբեմն ծուռ մտքէ, երբեմն ալ ապականեալ սրտէ առաջ գալով՝ շատ վնասներու պատճառ կ'ըլլան։ Ու այսպիսի վնաս-

սակար գրքերն ալ՝ նոյն գաղղիական մատենագրութեան բնական շնորհքը ունենալով, մարդկային ապականեալ բնութիւնն ալ օգնական գտնելով, ամենուն աւելի դիւրաւ սիրելի կ'ըլլան, անով ալ տուած վնասին աւելի շատ։

Այս եռքի ատեններս ալ ողջամիտ համբաւաւոր մատենագրաց հետ երևելի եղան ուրիշ շատ մեծահանձար մատենագիրներ ալ Գաղղիացւոց մէջ, որ ուղղադատ մարդիկներու մեծ ցաւտուին՝ թէ հասարակաց ըրած վնասնուն պատճառաւ, և թէ իրենց ազանչելի հանճարը վնասակար մատենագրութիւն նուաստացընելնուն պատճառաւ։ Զինանկ որ ան հանճարներն որ անմահ մնալու արժանի էին՝ քիչ ատենէն մոռացութեան մէջ պիտի թաղուին։

Այս տեսակ մատենագիրներէն մէկն ալ է Եւժէն Սիւ [1], որ թէպէտ դեռ աշխոյժ երիտասարդութեան տարիքն է, բայց անխոնջ աշխատանօքը հիմակուընէ հատորներու հեղինակ է։ Այնպիսի մ'ազգ որ իրեն մեծ մատենագրական տաղանդը կը ջանայ ապականել իր հանած վնասակար գրքերովը։ Այս եռքերս հանեց գիրք մ'ալ Թափառական Հրեայ [2] ըսուած, որ լի է ամպարշտական ու աղտեղի տեսարաններով։ Բայց դժբախտաբար թէ Գաղղիա և թէ Գաղղիայէն դուրս ամէն թեթևաբարոյ ընկերութեց զբաղարանը եղաւ աս վնասակար գիրքը։

Այս գրքիս դէմ ելան չէ թէ միայն Գաղղիոյ կտրիճ եպիսկոպոսները, հապա նաև ուղղախոհ օրագիրներ. որոնցմէ մէկէն մենք ալ թարգմանեցինք աս ետևի հատուածը. որովհետև աղուոր ճարտասանութեամբ կը համոզէ՝ թէ ինչ մեծ է կրօնի վսեմութիւնը, ու մոլութեամբ ինչպէս հանճարն ալ կը նուաստանայ։

ԱՅՆՊ երկմտիմ ասել եթէ ոչ երբէք այնպէս զհանդէս հզօր օգնականութիւն քրիստոնէական կրօնիցս իցէ տեսանել, որպէս 'ի մեծամեծ վիշտս վտանգի։ Այնչ խոնարհին ամենայն գլուխք, մինչ նկուն լինին ամենայն միտք 'ի բռնութենէ չարին, մինչ յոյս ինքնին, յետին մխիթարութիւն վըշտացելոց, ոչ ևս արձակէ յիւրոց անտի ճառագայթից նշոյլ ինչ յամպսն որ մթագնեն զերկինս շուրջանակի, անդ սկսանին գործք քրիստոնէութեան, ուր դադար առնու գործ մարդկութեան, և խնամողական ձեռաքն նեցուկ մտանէ դողդոջուն ազգաց 'ի չարաժամ աւուրս պանդխտութեան նոցա։ Այսց իսկ Շ աթոպրիան յիգին քրիստոնէութեան. "Այծ զմըտաւ որպիսի և վիշտս կամք իցեն քեզ, և լեր աներկևան զի քրիստոնեայ կրօնք կանխեալ են քան զքեզ և զդարմանսն մերձ եղեալ։"

Ոչ մոռանայ այս կրօն զաւուրս ծագման իւրոյ։ Այն յաշխարհ յաւուրս ահագին տառապանացն, քան զոր առաւելագոյն վշտօք չէր թերևս տագնապեալ այս աշխարհ՝ յորում բնակեալս եմք. առաջին հայեցուած նորա ետես՝ զի տատաներ ինքնակալութիւնն հռովմէական հանգուցեալ 'ի վերայ ապականարար բարուց, և աւերակաց կրօնից. որպէս զշինուած մեծակառոյց, ընդ որով կործանիցին որդնակեր նեցուկք։ Այս ինքն 'ի վեր կալաւ զազգ մարդկան յաւուրս խռովութեանց և կործանմանց, և 'ի տագնապողական յերկունսն, որ 'ի մահուան հնացելոյ աշխարհին, և ծնընդեան նորոյս. նա ինքն 'ի ժամանակս արշաւանացն հիւսիսի ընդ մէջ արձանացաւ քաղաքական կարգաց և խուժադուժ գազանութեան որ բնաւորապէս ինն դիմէր 'ի հանդէս մեծի հարսանեաց. և բարերարնորին ձեռնտուութեամբ ամոքեցաւ հարուածն։ Որք կարող իցեն 'ի վեր ելանել 'ի ծագ կատարման իրաց որպէս զի 'ի սկզբանէ անտի տացեն զվճիռն, տեսանեն այնպիսիք զի քրիստոնէութիւն յաղթանակ է իմացականին 'ի վերայ նիւթական բնութեան, տիրողութիւն

1 Eugène Sue. 2 Juif errant.

իմն բարոյական մարդոյն 'ի վերայ բնաբանականին. և վասն այնորիկ իսկ քաջ մխիթարիչ հանդիպի ամենայն վշտաց, դարման ամենայն հիւանդութեանց, և 'ի բնէ օձան ամենայն տառապանաց։ Ընդ պատմութիւնս, ամենայն ուրեք յանդիման լինի քեզ զի կատարէ զայս գեղեցիկ պաշտօն. և ձեռն տայ 'ի վեր կանգնել զմարդկային բնութիւն 'ի ծոցոյ աւերակաց իւրոց։

Լարիկ տէր է յաւիտենական քաղաքին զոյգ ընդ պատերազմասէր խուժանին իւրոյ։ "Օ գամ ինչ յանձին, աղաղակէ բարբարոսն, որ մղէ զիս հրոյ ճարակ տալ զՀռոմ"։ Ո՞'ի բաց յափշտակեսցէ զՋահն 'ի հրդեհարկու ձեռաց նորա և ազատեսցէ զպարտեալն Հռոմ։ Լայդ յաղթանակ է կրօնից։ Խաղաղարար բազուկք հայրապետին տարածեսցին ընդդէմ կործանելոյ քաղաքականութեանն և սպառնալից բարբարոսութեան, որ ահա 'ի վեր ամբառնայ զոտն հարկանել առաքուր զզոհ իւր. և քրիստոնէութիւն ոյժ տուեալ մեծապէս բարոյական զօրութեան՝ շահեսցի յաղթանակ գեղեցիկ 'ի վերայ նիւթականի զօրութեան։

Տես և զՍտիղաս որ ընդ քարշ ածեալ աշխարհ մի սպառազէն զկնի իւր՝ զթագաւորութիւնս յանապատ դարձուցանէ, և որպէս զհրդեհ թողու զկնի իւր ակօս երկայն աւերակաց վերածխելոց, և գայ նուիրական իմն գործել զգործն վրէժխնդրութեան և կործանման, և հարկանէ զդուռն Հռոմայ։ Ո՞ւր իցէ Ակիպիոն, որ տացէ պատասխանի սպառնալեաց ըսկայազօր այսր Հննիբաղայ։ Ո՞, որպէս զՄարիոս, եկեսցէ և տարածեսցէ զՀզօր բազուկս իւր ընդ մէջ Հռոմայ և հրոսակացն հիւսիսականաց։ Լայդ գործ է քրիստոնէութեան։ Լրութայ, և իւր արժանի հատուցանէ զտրիտուր փոխարինի մարդադաւ հիւրընկալուէն, որով ժողովէին զնա կայսերք 'ի կրկիսին։ Տեսանէս զծերունին՝ որ ընթանայ բարձր 'ի գլուխ և հանդարտահայեաց ընդ մէջ արհաւրաց համայն ժողովրդեան։ Ընդ առաջ դիմէ վտանգին, որում ոչ ժուժկալեցին արք սպառազէնք։ Որպիսի՛ ընթացիւք դիմէ յահաւոր ճամբարս Հռոնաց։ Մի՛ ինչ վհատիցիք. պատգամաբեր է քրիստոնէութեան առ բարբարոսութիւն։ Ընքոտեալ ծերունին պաշտպան լինի Կապիտոլեայ, և կանգնի միայնակ ամբարտակ յաւիտենական քաղաքին։ Օ օրութիւնն նիւթական՝ հանգուցեալ 'ի Ստիղաս՝ նկուն եղիցի առաջի բարոյական զօրութեան, զոր քրիստոնէութի՝ հանգոյց 'ի հրեշտակ իւր. և ահա խաբազանն Աստուծոյ յետս ընկրկի առաջի առնն Աստուծոյ։

Յակն արկ զյիշատակարանս դարուց. փոփոխին տեղիք, փոփոխին դէպք և արք. պաշտօն քրիստոնէութեան ոչ փոխի. և զիա՞րդ փոփոխեսցի, զի միշտ պաշտամունք նորա հաւատք են, յոյս և սէր։ Յաւուրս ցաւոց յայտնի լինի կարողութիւն նորա. և մարդկային թշուառութիւնք պատուանդան իմն են 'ի վեր ամբառնալ զմեծութիւն նորին։ Արկ զաչս քո 'ի Մարսիլիա, 'ի նախնի թագուհի հաբաւականն Պաղղիոյ. 'ի չարագուշակ աւուրսն, յորում տագնապեցաւ յահաւոր տառապանաց։ Ընդ ոչ յայր ոք յանդիման տպաւորէր խարազանն, ոչ Ատտիղաս անուաներ պատուհասն և ոչ Լարիկ. այլ սոսկալի ևս, հարկաներ բազմագոյն և անվրիպելի հարուածովք։ Մինչդեռ ամենեքեան 'ի փախուստ խուճապէին, և կամ ահաբեկեալք զդողղի հարկանէին առաջի մահագոյժ ախտին, ո՞ել ընդ առաջ նորա և արգել զի մի 'ի սպառ տիրեսցէ քաղաքին։ Ո՞յօժարեցաւ լինել ընկեր անմեկնելի կորստեան և մահուան։ Լայդ իրաւունք էին քրիստոնէութեան. և ամենայն ոք գիտէ՝ եթէ ո՞րպէս եկաց 'ի վերայ իրաւանց իւրոց։ Ոչ յիշատակեմք զհրաշն մեծանձնութեան, որ կենդանի են յա-

մենայն յուշարար յիշատակս, և ոչ յանդիման առնեմք զգեղեցիկն զայն դիւցազներգութիւն քրիստոնէական որ համայն բովանդակի յանուն Պել-զունս. այլ կրկնեմք միայն ընդ երախտագէտ թոռունս եթէ սէրն անբաղառ անցոյց զանցոյց զմեծութեամբ ցաւոյն. և քստմնելի մենամարտեալ ժանտախտին ընդ հայրապետին, յաղթական հանդիսացան կրօնք։

Յաւուրս մաղձացաւին այնպիսի ինչ հանդիպէր միւսանգամ։ Արդարև պետական տեսչութիւն ժամանակին գործ ինչ ոչ գործեաց 'ի մատուցանել քրիստոնէութեան զիրաւունսն նոքա։ Ոչ ապաւինութիւն յաղօթս, ոչ բողոք առ կրօնսն, որ զձեռսն լի պաղատանօք 'ի վեր յերկինս ամբառնայ, և անդուստ իջուցանէ յերկիր լի ողորմութեամբք. ոչ ինչ, որով զրկիցին մարդիկն՝ որ 'ի ժամանակին պետք էին իրաց տեսչութեան, յիրաւանց անուան անաստուածական պետութեան. մտացածին տեսչութիւն, զոր յետ ընդ երկար ջատագովելոյ և արդեամբք կատարեցին։ Այլ կրօնն ոչ մնայ զի հրաւիրեսցի 'ի կատարել զպաշտօն իւր։

Ոչ գիտեմք եթէ ոք յիշեսցէ արդեօք, թէ ուղղափառ կրօնք և կղերիկոսութիւն յոր սահման հասեալ էին յայն աւուրս յաշխարհի մերում. և մանաւանդ յառաջնումն թեմի թագաւորութեանն, ուր ախտին զայրացեալ էր կատաղութիւն առաւելքան թէ այլուր։ Այտուն յայնժամ զպտուղ իւրեանց երկայն զրպարտութիւնք կուտակեալք 'ի վերայ երիցութեան 'ի ժամանակս նորոգելոյ պետութեանն որվրիպակատեսպատուով մեծարեալ էր զերիցունսն, և պարգևեալ նոցա փոխանակ աղատութեանն որ կարևորն էր՝ անընտրող ինն պաշտպանութիւն, թէպէտ և քարեսէր և լի դեղեցիկ դիտաւորութեամբք։ Աւարահարութիւն արքեպիսկոպոսարանին հանդիպէր 'ի 29 յուլիսի 1830 զոյգ ընդ աւարառութեան Ովիլրեայ, և խռովարկուքն արիւնաշաղախ ձեռօք ընթանային 'ի խնդիր արհիեպիսկոպոսին Արլէնեայ մինչև 'ի Ռոնֆլան 'ի մատնել զնա 'ի մահ։

Յետ այնորիկ զմիմեանց կնի յաջորդէին ցոյցք և գործք ոխութեան։ Խափանեցաւ պաշտօնն աստուածային յեկեղեցւոյ սրբոյ Յունուեւեայ։ Տեսաւ աւարառութիւն եկեղեցւոյ սրբոյն Գերմանոսի Օսերրացւոյ 'ի պատճառս տարեւոր պաշտաման վասն հանգստեան հոգւոյ դքսին Պերրեայ, և երկրորդ յափշտակութիւն և կործանումն արքեպիսկոպոսարանին, առ որ մերձ էր և Ովիէր, որ էր 'ի ժամանակին 'ի ձեռանէ դիւանագրի պետութեանն, և անկարեկիր ոգւով տայր պատասխանի ումեմն յազգային պահապանաց, որ աղաչէր զնա անձամբ և 'ի ձեռն ազգային պահապանաց սանձել զխժդժական աւերածն. "Ոչ արժան թշնամեցուցանել, ասէ, զժողովուրդն ընդ ազգային պահապանաց. անագան է արդ, պարտ է մնալ կատարածին„։ Ի Ռոնֆլան յաւարի առին և յաւեր դարձուցին, զխաչն Քրիստոսի 'ի վայր կործանեցին 'ի գագաթանց եկեղեցեաց. որպէս կարեվեր սրտիւ ասէր արհիեպիսկոպոսն Արլէն 'ի միում կոնդակայն իւրոց. "Նշանն Քրիստոսի ջնջեցաւ 'ի ճակատուէ դշխոյին քաղաքաց„։ Հովուապետն քաղաքին Փարիզայոց բռնադատեցաւ թաքչիլ իբրև զչարագործ ոք, և ստէպ փոփոխել զտեղի թագստեանն 'ի խուսափել յորոգայթից զոր լարէին անձին նորա։

Դ. 'ի Ճշգրիտ գտակաւ 'ի վերայ հասանել պայմանի ուղղափառութեան և երիցանուոյն հարկ էր մերձ գտանել ոխերիմ իսսից 'ի վերայ եկեղեցադրամսակին 'ի նախընթաց ամի մաղձայաւին։ Տակաւին 'ի միտս մեր է պատկեր աւուրն ամբոխի և մրրկաց։ Ստոյիկեան գործակալք 1830 ամին եկակոչ առնէին 'ի բեմ իւրեանց զամենայն կարգ եկեղեցական զինուորեայ, և խռովարկուքն արիւնաշաղախ ձեռօք ընթանային 'ի խնդիր արհիեպիսկոպոսին Արլէնեայ մինչև 'ի Ռոնֆլան 'ի մատնել զնա 'ի մահ։

Յետ այնորիկ զմիմեանց կնի յաջորդէին ցոյցք և գործք ոխութեան։ Խափանեցաւ պաշտօնն աստուածային յեկեղեցւոյ սրբոյ Յունուեւեայ։ Տեսաւ աւարառութիւն եկեղեցւոյ սրբոյն Գերմանոսի Օսերրացւոյ 'ի պատճառս տարեւոր պաշտաման վասն հանգստեան հոգւոյ դքսին Պերրեայ, և երկրորդ յափշտակութիւն և կործանումն արքեպիսկոպոսարանին, առ որ մերձ էր և Ովիէր, որ էր 'ի ժամանակին 'ի ձեռանէ դիւանագրի պետութեանն, և անկարեկիր ոգւով տայր պատասխանի ումեմն յազգային պահապանաց, որ աղաչէր զնա անձամբ և 'ի ձեռն ազգային պահապանաց սանձել զխժդժական աւերածն. "Ոչ արժան թշնամեցուցանել, ասէ, զժողովուրդն ընդ ազգային պահապանաց. անագան է արդ, պարտ է մնալ կատարածին„։ Ի Ռոնֆլան յաւարի առին և յաւեր դարձուցին, զխաչն Քրիստոսի 'ի վայր կործանեցին 'ի գագաթանց եկեղեցեաց. որպէս կարեվեր սրտիւ ասէր արհիեպիսկոպոսն Արլէն 'ի միում կոնդակայն իւրոց. "Նշանն Քրիստոսի ջնջեցաւ 'ի ճակատուէ դշխոյին քաղաքաց„։ Հովուապետն քաղաքին Փարիզայոց բռնադատեցաւ թաքչիլ իբրև զչարագործ ոք, և ստէպ փոփոխել զտեղի թագստեանն 'ի խուսափել յորոգայթից զոր լարէին անձին նորա։

Դ. 'ի Ճշգրիտ գտակաւ 'ի վերայ հասանել պայմանի ուղղափառութեան և երիցանուոյն հարկ էր մերձ գտանել ոխերիմ իսսից 'ի վերայ եկեղեցադրամսակին 'ի նախընթաց ամի մաղձայաւին։ Տակաւին 'ի միտս մեր է պատկեր աւուրն ամբոխի և մրրկաց։ Ստոյիկեան գործակալք 1830 ամին եկակոչ առնէին 'ի բեմ իւրեանց զամենայն կարգ եկեղեցական զինուո-

լութեան . և մինչ բանք լինէին չափել զհաց ապգային մերոց կրօնից , խղճմտութիւնք տնտեսական զգուշութեան 'ի վեր երևէին 'ի շինութիւն լսողաց , մանաւանդ յատենին , որ առանց համարակալութեան առատանայր առ տեսչութիւն քաղաքական բարեկարգութիւն , և չափաւոր զբիւրաւորսն համարէր ։ Այսպէս արքիեպիսկոպոսք եղեն յանդիման , և զհետ նոցա եպիսկոպոսունք և ապա երիցունք կարգ ըստ կարգէ . թշնամանք , խեղկատակութիւնք խուժէին առ ամենայն քուէարկութիւն . սակն մարտիրոս իմն էր , և բեմ գաղղիացի և քրիստոնեայ ատենին ոչ ինչ ընդհատ 'ի բարձուանդակէ ատենին , յորմէ Յուլիանոս հեթանոսամիտն հալածէր և ծաղածանակ առնէր զքրիստոնեայս ։ Ոչեր ոք 'ի նուաստ ճոռոմաբանից աւանաց , յորոյ էին 'ի գրապանի թշնամանք , վիժածք խակութեան մտաց իւրոց , վոլթերեանն երգիծաբանութիւն կամ թէ ումեք սիրելի ևս իցէ ասել հարուածն ըստ օրինադիր հանդիսի ։

Երբև պաշտօնեայք քրիստոնէութեան մի ըստ միոջէ անցին ընդ փուրսիշն և ընդ բրածեծ , 'ի կարգ անկան կանոնիկոսք ։ Յայնժամ ոմն 'ի գործակալաց սրացաւ 'ի բեմն , ճակատ նորա լուսաւոր 'ի փառացն զոր շահելոց էր , և այնպիսի իմն տեսլեամբ , զի թուէր իմն ասել . " Հապա , ունկընդիր լերուք , այժմ իսկ անհնարինս ծաղր արարից " ։ Ունկնդիր եղեն գործակալին , և նա ասէ . " Յինչ պիտանացու իցեն կանոնիկոսք " . որպէս թէ ասէր , Յինչ պիտանացու իցէ դաղձն , յինչ պիտանացու իցէ փուշ և տատասկ . յինչ պիտանացու իցեն թերթք վիպասանուեց ։ Ասեն , երբև զի հզօր էր մտաք , 'ի լուր փիլիսոփայական հանճարոյս զկայ էառ , և ջերմ ոգւով հաստատեցաւ՝ եթէ քանզի առ չարի՝ անհնարին էր սպանանել զկանոնիկոսս , այնու մարթ իցէ առնուլ քաջալեր՝ զի մի ևս կարող լիցին 'ի վեր առնուլ զոք 'ի կարգ իւրեանց ։ Յինչ պիտանացու իցեն կանոնիկոսք , կրկնէին մեծախոհագոյնքն ատենին , և մեծամեծս քրքիջ բառնային . իբրև թէ ասէին իմն՝ եթէ իշխէին . Յինչ պիտանացու իցէ քրիստոնէութիւն . քանզի 'ի ջնջել նոցա մեծապէս նուազէր սակն , և մարթէր այնու յաճախել զկողմն տեսչութեան քաղաքական կարգաց 'ի բարգաւաճանս բարեկրօն վարուց , 'ի պերճութիւն գաւառին , և չափաւորութեամբ ոչ սակաւ ։ Ռութք տեսող գոլով հանդիսին ասէի ցանձն իմ . " Քրիստոնէութիւն տայ պատասխանի . — Համբերութիւն " ։ Ի վերայ եհաս մաղձացաւն մատուցանել նմա բարեպատեհ ժամ զպատասխանւոյս , և գիտէք ամենեքեան եթէ քրիստոնէութիւն որպէս յօգուտ 'ի կիր էարկ զդէպսն ։

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՑՍ ։)

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պարիզ [1] ։

Ամ մանտրտիկ թռչունները անհանգիստ , շատախօս և ուրիշ ամէն թռչուններէն աւելի սրտոտ են ։ Սովորաբար շատը մէկտեղ կը պտրտին մէկ ծառէն մէկալը թռչըտելով , վեր վար ելլելով իջնալով . ոտքերնուն վրայ ալ ճանկեր ունենալնուն համար՝ ինչ դիրքով կ'ուզեն նէ՝ դիւրաւ կը կենան . երբեմն նաև բոլորովին կռնակի վրայ կախուածի պէս ծառերուն կեղևները կը կտցեն ։ Սոնք դիւրաւ բռնելու համար ծուղակին քովերը բու մը կամ ուրիշ դիշատիչ թռչուն մը կը դնեն . սոնք անիկայ որ կը

[1] Այս անունը գրինք Լիննէոսի Parus (Պարոս) ըսածին , որ տաճկերէն ճռուլգ գուշտ կամ լուբ գուշտ , և ռամկօրէն ֆիսֆիտ կ'ըսուի . գաղղ . Mésange, ու Charbonnière. իտ . Cinciallegra. անգլ . Tit.